հարկ արար զկղերն եկեղեցւոյ, շնորհեաց զայլ և այլ իրաւունս հովուաց նորին, երարձ և զհեթանոսական աղտեղի սովորութիւնս, մանաւանդ զզոհս կռոց, և հուսկ ուրեմն ետ փակել զմեհեանս և փոխանակ նոցա կանգնել զեկեղեցիս յամենայն տեղիս։

Շինչաւ հրդեհն հեթանոսական, և սկիզբն առ զարգանալ և բարգաւաճել կրօնն աստուածպաշտութեան. սակայն հակառակութիւնք փառամոլ եպիսկոպոսաց՝ հովիւ և առաջնորդ կոչեցելոց՝ վրդովեաց զխաղաղութիւնն. զի արդէն երեւեալ էր մոլորութիւն Դոնատեանց յամի 311։ Թէպէտ բազում անգամ 'ի ժողով գումարեալ քննեցան առաջի Կայսեր հակառակութիւնք և ամբաստանութիւնք, այլ չեղեւ հնար միաբանել նոցա, որ եւ տեւեաց մինչեւ երեւումն Արիանոսութեան, որոյ սկզբնահայր եկաց Արիոս Աղեքսանդրացի կամ Լիբէացի։ Սա ձեռնադրեցաւ Սարկաւագ 'ի Պետրոս եպիսկոպոսէ Աղեքսանդրացւոց և մերժեցաւ նզովիւք. իբրեւ աղաչեցին ժառանգաւորքն արձակել զնա 'ի կապանաց նզովիցն, պատմեաց նոցա ըզհրաշալի զայն տեսիլ, «Տէր, ո՛վ պատառեաց զպատմուճան քո, ասէ, Արիոս։ Իսկ Ակիւղաս յաջորդն Պետրոսի խաբեալ 'ի պատիր բանից Արիոսի, ընկալաւ զնա և ձեռնադրեաց երէց։ Իբրեւ յաջորդեաց յաթոռն Աղեքսանդրոս, ծանրացաւսումն եղեւ Արիոս, զի ինքն ակն ունէր նստիլ յաթոռն հայրապետական. եւ սկիզբն առնէր այնուհետեւ քամահրել զճշմարիտ վարդապետութիւնն Աղեքսանդրոսի եւ հրապարակաւ սերմանել զիւր հայհոյութիւնն, եւ 'ի մոլար վարդապետութեան իւրում ասէր, «Որդին Աստուծոյ ոչ է հաւասար Հօր, և ոչ 'ի բնութենէ և յէութենէ Հօր, ոչ միասնական և ոչ հանդիսապատիւ նմին, ոչ ծնեալ 'ի նմանէ յառաջ քան զյաւիտեանս, այլ օտար իմն և կրտսեր եւ յետ ժամանակի գոյացեալ որպէս զարարած բնութիւն, և անդրանիկ ամենայն արարածոց, և նովաւ արարեալ զամենայն արարածս»։ Խորէ. Բ. 86։ Զեռնտու և օգնական գտաւ սմա և Եւսեբիոս եպիսկոպոս Նիկոմիդեայ։ Աղեքսանդրոս նզովիւք դատապարտեաց զԱրիոս եւ զհամախոհս նորա 'ի ժողովի 100 Եպիսկոպոսաց (321), եւ սինհոդոսական թղթով ծանոյց զիրս հաւօրէն